

# ԲԱՆԱԳԵՃԵՐ ԵՎ ՔԱՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ  
ՀԱՂԲԱՏԻ ՎԱՆՔՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Բանաս. գիտ. դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հանգուցյալ բանասեր, գոկտոր Համազասպ Ոսկյանը (Վիեննա) մի քանի տարի առաջ (1965) լույս է ընծայել անցյալ դարու 20-ական թթ. ստեղծված մի ուշագրավ մատենագրական հուշարձան՝ Հովհաննես Ղրիմեցու «Պատմութիւն հոչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանին» երկը, որ հայագետներին ցարդ ծանոթ էր ոռուսերեն խիստ համառոտ թարգմանությամբ<sup>1</sup> և նույն Ոսկյանի<sup>2</sup> ու հնագետ Կ. Ղաֆագարյանի<sup>3</sup> աշխատությունների մեջ եղած առանձին քաղվածքներով:

Հովհաննես Ղրիմեցին Խ. Արովյանի ժամանակակիցներից ու մտերիմներից էր: Միևնույն վանքում, տարիներ շարունակ, նրանք ապրել էին միասին, ետագայում՝ նամակագրություն ունեցել: Արովյանի կենսագրության ուսումնասիրության առիթով դիմեցինք այդ աշխատության, համոգված լինելով, որ Ղրիմեցու «Պատմության» հանգամանալից ուսումնասիրությունը պիտի անծանոթ գրվագներ ու ատաղձներ տրամադրեր: Գրքի ընթերցանությունը թեպետ և այդ առումով ոչինչ չտվեց, բայց ընձեռեց մի քանի անուղղակի վկայություններ, որոնք, կարծում ենք, բանալի են տալիս լուծելու Սայաթ-Նովայի կենսագրության Հաղբատայն առեղծվածը:

Բաղմավաստակ Ախվերդյանից սկսած մինչև բանասեր-պատմաբան Մորուս Հասրաթյանը և ավելի նորերը, շուրջ 120 տարի, գրել ու պնդել են, թե Սայաթ-Նովայի կյանքի վերջին քսանհինգ տարիներն անցել են Հաղբատի վանքում, աբեղայական սքեմի տակ, հավատացել ու կրկնել են, թե Սայաթ-Նովան եղել է Հաղբատի մանքի լուսարարը և այլն:

Ղրիմեցու գիրքը բոլորովին ուրիշ բան է ասում Հաղբատի հենց այդ քսանհինգ տարիների իրավիճակի մասին: Պարզվում է, որ 1740-ական թթ. սկսած, ընդհուպ մինչև գարավերջ, բացառությամբ մի վեցամյա շրջանի, Հաղբատի վանքը անմարգաբնակ է եղել, դատարկ ու ավեր, այնքան, որ պատերի վրա խտորեն թփեր էին ածել: Իսկ մի վանքում, որի կամարների տակ

<sup>1</sup> Ոռուսերն համառությունը, մեր կարծիքով, կատարել է էջմիածնի սինո դի երբեմնի դատախառ Թովմա Ղորղանյանը (1790—1843) և հանձնել սենատոր Պավել Հանին (1793—1862), վերջինս էլ այն 1840 թ. ուղարկել է Պետերբուրգ, կայսերական գիտությունների ակադեմիային (տե՛ս «Ժурнал министерства народного просвещения», СПб, 1840, մասն XXVIII, էջ 68—69): Լույս է տեսել 1863 թ., ակադ. Բրոսսեի աշխատասիրությամբ:

<sup>2</sup> Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1958 (Ազգային մատենադարան, հատ. 826, արտատպված՝ «Հանդես ամսօրյայի» 1957—59 թթ. համարներից):

<sup>3</sup> Կ. Ղաֆագարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքները և վիմագրական արձանադրությունները, նորեան, 1963:

ու միայն եկեղեցական արարողություն չի կատարվել, այլև մարդ էակ իսկ չի շարժվել, անհնար բան է, որ քսանհինգ տարի շարունակ Շայաթ-Նոսան լրւարարություն աներ:

Ամրապնդենք մեր ասածը նախ Ղրիմեցու վկայություններով,  
Խոսելով Նադիր-շահի սպանությունից (1749, հունիսի 19) Հետո Հաղբա-  
տի գլխին եկած արհավիրքների՝ Կուգարաց աշխարհում ու Հարեան զամառ-  
ներում լեկղիների սփոռած ավերի ու սրածությունների մասին, որոնք տևեցին  
Երկար տարիներ («ամս յոլովս») և ամայացրին բաղում ավաններ ու դյու-  
դեր, Ղրիմեցին պարզորոշ ասում է, որ Հաղբատի վանահայր ու թեմի առաջ-  
նորդ Գրիգոր Եպիսկոպոսը՝ «անձարացեալ թողու զմենաստանս ամայի և գնայ  
Հանդերձ միաբանիւք ուխտիս ի Տիֆիս քաղաք, ուր և մեռաւ նա... յամի  
Տեառն 1751»<sup>4</sup>:

Հետադա էջերում, անդրադառնալով թեմի հաջորդ առաջնորդների՝ Զա-  
քարիա Դաթինյանի և Ռոթեսու Աշոտարակեցի Գոլոշյանցի (կարգված 1771,  
հունիսի 5 գործուսեությանը ընդհուար մինչև 1776 թ., որ նույնպես ծավալվել է  
Տփդիսում, և պատմելով Զեկամի Մխիթար Քայանթարի՝ նույն տարվա ուխ-  
տագնացության մասին դեպի Գուգարաց սրբավայրեր ու Հաղբատ, Ղրիմեցին  
ավելացնում է այս շափազանց կարենոր վկայությունը.

«...Եւ մտեալ զառաջինն յաւագ եկեղեցին որ նշանի, երկրպագէ ի նմա  
Բարձրելոյն Աստուծոյ և ապա հայեցեալ ի խրթնութին նորա և յանշքութին,  
զի այր աւազակաց էր լեալ՝ ի բազում ժամանակաց հետէ յամայութեան կալով.  
յարտասուս հարկանի այրն բարեպաշտ և զի աղուեղեալ էին բովանդակ եկե-  
ռեցին ուստահս յասազակաց անտի. և բազմութինք բուսոց և քիոց խիտ առ  
խիա բուսես զնոքօֆ, ծածկեալ ունիկն զզլուս նոցաւ և զորմունս առ հասա-  
րան, վաղվաղակի հրամայէ բազմութեան արանցն՝ սրբել և մաքրել և զամե-  
նայն բոյս և տունկ առ հասարակ յարմատոց խրել: ի կատարի հրամանին,  
սրբեալ նաև բահանայական օրինութեամբ, ի լաշորդ աւուրն տայ պատարա-  
գել զթրիսոս յեկեցւոց անդ սուրբ նշանին... Այս ամայութին սկսեալ էր ի  
մահուանէ անտի նաւարշանայ, որ եղեւ յերեսաց ասպատակութեանց Ալանաց  
կամ Անկաց, որք են Լեկզիք: Զոսոս առ կենդանութեամբ իւրով զսպեալս  
ունէր նաւարշան, այլ իբրև սպանաւ նա, և համբաւ մահու նորա տարածեցաւ  
առ նոսա, սկսան այնուհետեւ դունդս գունդս յասպատակի սփորի ընդ ամենայն  
սահմանս Աղուանից, և վրաց և Հայոց կողմանցս, և ընդ ամս յոլովս անբնդ-

<sup>4</sup> Թումհանու Ղրիմեցոյ Պատմութին հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. նշանին». Վիեննա, 1965, կ, 116 (Հայկական մատենաշար Գալուստ յուլիսինկան հիմնարկության): Հաղբատի մեկ այլ պատմազիր՝ Ռուսում բեղ նրգնկանցը, ավելի առաջ անցնելով՝ զրել է. «Լեկղիք ի սկզբան ժեկ գարուն իսպառ աւերեցին զշաղրատ, արարին զայն իրրե ամայի անապատ և մնաց թափուր ի ընակչաց մինչև յ1776 ամն»: Հովսեփ Սրգությանն և այլ առիթով՝ արձանադրել է. «Յետ աւերման աշխարհին Վրաց ի պարսիկ Աղայ Մահմատ-խանէն», ի թվին հայոց ԻրՄե՞ն (— 1795) հրամանաւ կայսերունուն Ռուսաց Եկատարինելի ընդ զորաց նոցին եկի ի հայրենի աշխարհն իմ սակս օղնականութեան, և չոքայ յերկրապատմաթին վանօրէիցն Հաղբատայ և Սանահնի՝ տեսի  
զամայութինս նոցին, միկտեցայ ի վերայ նոցին (Ը. թ. Եր դ կ յ ա ն ց, Հնախօսական  
տնօղարութին Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ նշանի, Վաղարշապատա, 1886, էջ 10—  
11: Ալ տարրերակ՝ նույն տեղում, էջ 82, նաև՝ Երեանի պետական պատմական թանգարան,  
Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, Հայերեն արձանագրությամբ  
առարկաներ, աշխատասիրությամբ թ. Մուշեղյանի, Երևան, 1964, արձ. 56):

<sup>5</sup> Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 232:

Հատ արշաւանօք յարձակեալ ի սոսա զբազում աւերութիւնս և ղապականութիւնս գործեցին՝ սպանութեամբք, գերեվարութեամբք և աւարառութեամբք. առով ամայացան յոլով գիւղուայք և վանուայք և զաւանք, ընդ որս և այս մենաստան և գիւղ նորա Հաղբատ, առ ցրուելոյ և խոյս տալոյ բնակչաց սոզա յամուրո և յանենոյթ տեղիս: Ուստի և առաջնորդք ուխտիս ոչ կարացեալ մնալ աստէն, նստէին ի Տփիսիս, որպիսիք եղեն՝ Գրիգոր Սուրեկունեան ի վերջին ամս իւր, և Զաքարիա յամենայն ժամանակս իւր, և Ռէթէոս մինչև ղԱբրահամ յաջորդ իւր»<sup>6</sup>: Նույնը բառացի հաստատում է Ռ. Երզնկանցը. «Հաղբատ և շրջակայ գիւղօրայք նորա ընգերեկար մնացին անմարդաբնակ իբրև ամայի անապատ մինչև ց1776 ամն»<sup>7</sup>:

Միայն Հաղբատը չէր ավեր ու անմարդաբնակ՝ դարձած «այր աւազակաց»: Նույն ողբալի դրությունն էր նաև Սանահնում: Վկայակոշելով Սանահին գյուղի ծերերին, Ղրիմեցին գրում է նաև, թե այս վանքն ևս «ի նմինամայութեան» է եղել 1720-ական թթ. սկսած «մինչեւ ցԱբրահամ», նշանակում է՝ ավելի երկար, մինչև 1781 թվականը<sup>8</sup>:

Գուգարաց աշխարհում խաղաղությունը մասամբ վերահաստատմում է միայն 1777 թ.: Հեռավոր վայրեր տարագրված ու լեռներում ապաստանած բնակիչները աստիճանաբար վերադառնում են հայրենի շեներ: Բարեպատեհիրավիճակը նաև արամադրություն է առաջ բերում շենացնելու ամերակ վանքերու և, ամենից առաջ, Հաղբատը:

Եվ սա բացարձակ ձշմարտություն է: Միմեռն Երևանցու Հիշատակարանում ևս 1777 թվականից են երեսում որոշակի խոսքեր Հաղբատը վերաշինելու և միաբաններին հավաքելու վերաբերյալ: Ուկնդրելով վրաց Հերակլ թագավորի և տփղիսահայ հոգեոր ու աշխարհիկ դասի երեւլիների գրավոր խնդրանքներին՝ Երուսաղեմի նվիրակ Աբրահամ վարդապետին Հաղբատի թեմի առաջնորդ նշանակելու մասին, 1777 թ. սեպտեմբերի 5-ին արձակած իր կոնդակնեռում անկեղծ ուրախություն հայտնելով, որ Հեռակլը «կամէր նորոգել զՀաղպատ», Միմեռն Երևանցի կաթողիկոսը հորդորում էր թագավորին՝ «մնար հաստատ ի վերայ նոյնոյ դիտմանն, առ ի շինել զսուրբ վանքն զայն», Աբրահամ վարդապետին հրահանգում՝ հետեւելու «վանիցգ շինութեաս», իսկ մյուսներին՝ տփղիսահայ մեծատուններին և երեւլիներին՝ «օժանդակել նմա (Աբրահամին—Պ. Հ.) ի շինութիւն վանիցն այնմիկ», քանի որ, ինչպես ավելացնում է կաթողիկոսական կոնդակների համառոտագրողը, «այժմոյս արքայն Հերակլ դրեալ էր սրբազան Վեհին, թւ կամիմ շինել զՀաղպատ»:

Շոլոր հիմքեցն ունենք ենթադրելու (ավելի ճիշտ՝ պնդելու), որ 1777 թ. աշունն ու առաջիկա ձմեռը Տփղիսում անցկացնելով և նորիցնոր ծանր ու թեթև անելով Հաղբատը վերաշինելու ծրագրերը, անհրաժեշտ միջոցներ ու նյութեր հայթայթելուց հետո, հաջորդ՝ 1778 թ. զարնանը Աբրահամը փոխադրվում է Հաղբատ, հանդերձ ստորադաս միաբաններով:

<sup>6</sup> «Յովհաննու Ղրիմեցւոյ պատմութիւն», էջ 120—122 (ընդգծումները մերն են—Պ. Հ.)»

<sup>7</sup> Ռ. ք. Եր գ ն կ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 113:

<sup>8</sup> «Յովհաննու Ղրիմեցւոյ պատմութիւն», էջ 163: Աբրահամը Սանահնի առաջնորդ է կարդիչը հիշյալ թվականին:

<sup>9</sup> «Դիվան հայոց պատմության», գ. ԺԱ, Թիֆլիս, 1913, էջ 164—166.

Այս ժամանակից էլ հնամենի սենատանում սկսվում են արարողությունները, վերականգնվել ավերակները, կառուցվել նոր շինություններ, որոնք հանգամանորեն թվարկում է Ղրիմեջին<sup>10</sup>:

Աբրահամը, սակայն, իր պաշտոնում երկար չի մնում՝ հաղիվ երեք տարի. 1780 թ. (թե՛ 1781) նա փոխադրվում է Սանահին, իսկ տեղը դրավում է Աղվանից Խորայել կաթողիկոսը<sup>11</sup>: 1784 թ., գարձյալ Հերակլի միջնորդությամբ, նշանակվում է նոր առաջնորդ, այս անգամ՝ Դավիթ Թավելդարովը կամ Խերոդինյանը (Խպիսկոպոս էր օծվել 1783 թ. ապրիլի 23-ին, առաջնորդ դարձել՝ 1784 թ. նոյեմբերի 7-ից)<sup>12</sup>: Մրա բախտն էլ չի բերում: Լեկիների դեռ գարնանն սկսված արշավանքը սպառնում է կրկնվել: Հաղբատում կյանքը մերսին դատապարտվում է մահվան, վանքն ամայանում է, իսկ նոր առաջնորդն ու հին միաբանները շուտով վերահստատվում են Տփղիսում: Հաղբատի մասին մեզ մատչելի վավերագրեր մեկ էլ ձայնում են 1792 թ., բայց այնքան հանգամանորեն, որ միանդամից ի հայտ են բերում անցուծ ութ տարսերի իրավրածակը:

Դավիթ Թավելդարովն այն ժամանակ դեռ Տփղիսում էր, վայելում էր վրաց արքունիքի հովանավորությունը, հետամտում աշխարհիկ վայելքների, այնքան, որ ի վերջո շարժում է ամենայն հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու գայրությունը, և վերջինս, 1792 թ. հուկիսին, թաղավոր Հերակլին և արքայազն Շերողուն ուղղված դույզ կոնդակներում, հաղիվ զսպելով իրեն, նոր խրատական է կարդում. «Թէ գրով և թէ բերանով պատուիրեցաք՝ համեստութեամբ և խաղաղութեամբ վարիլ, և զվանաց շինութիւն շանալ և այն: Ալլ նա ոչինչ արար ուղղութիւն, որ Աստուծոյ և մարդկան հաձելի լինիցէր, և ի յառնել յէղկեացն, զվանքն դատարկեալ եկն ի քաղաք (=Տփղիս—Պ. Հ.), և ոչ ես դարձաւ: Հաղում ամայացեալք շինեցան վերստին, իսկ նա ի վանիցն զայլոց շինեալ փակեալ երեր յայդր յորչ հաստատեալ ինքեան և զվանքն ամայի թողովը<sup>13</sup>: Ալլ առիթով ևս Ղուկաս Կարնեցին կրկնում է, որ Դավիթը վաղուց հաստատել է Տփղիսում «մշտնցենապէս բնակութիւն...»<sup>14</sup>,

Որովհետեւ Հաղբատի երկրորդ ամայությունն սկսվել է 1780-ական թթ. մոտավորապես կեսերին, լեկիների ակնարկվող արշավանքի տարվանից, պարզենք նախ, թե որոշակիորեն ե՞րբ է այն եսել:

<sup>10</sup> «Ճող՛հաննու Ղրիմեցոյ Պատմութիւն», էջ 122—123:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 125 և 164:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 127, նաև Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Ար 2/11, էջ 105 և 110: Երբ վաղուց պարզված են Սայաթ-Նովայի քահանա ձեռնադրմերւ մոտավոր ռամանակը (1759—1766 թթ. միջն) ու ձեռնադրությունից հետո ստացած անունը (Տեր Մտեփանոս), ինքնարերարար Հերբիված է նաև Հ. Թումանյանի՝ 1913 թ. բանաստեղծական երեւակայությամբ խմբադրված ենթադրական վարկածը՝ Սայաթ-Նովայի և Դավիթ եպիսկոպոսի նույն անձը լինելու մասին (տե՛ս Հ. Թումանյան, Սայաթ-Նովա, Հոդվածներ և ճառեր, Սրբան, 1963, էջ 59—68): Մեծ բանաստեղծը թեպետ և բնդրածակ քաղվածքներ է կատարել Գյուտ Աղանյանի «Դիման հայոց պատմությանը ստվար հատորներից, բայց դրանք Սայաթ-Նովայի հետ բացարձակապես կապ չունեն: Թումանյանը երեկի ինքն էլ զգացել է, որ հիմքերը խախուտ են և մատնանշված թեմայով ղեկուցում կարդալոց հետո (1913, ղեկումբերի 5: Լրադրամին համառոտագրությունը՝ «Հորիզոն», 1913, ղեկումբերի 8, Առ 276) հոգվածը թողել է սեմագիր ու ի հրատարակել:

<sup>13</sup> «Դիման հայոց պատմության», գ. Պ. Թիֆլիս, 1899, էջ 580:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 582:

Դրիմեցու ասելով՝ 1786 թվականին: Այդ տարի լեկպիները՝ ավարների օմար-խանի (ՅՄՄԱ-ԽԱ) առաջնորդությամբ (որ Ղարաբաղի իրավահամար աղքականն էր), ոո ասպատականություններ են սփոռում ամենուր: Նրանց տարածած սարսափն այնքան մեծ լինում, որ Հաղբատցիք (ոչ միայն միաբանությունը, այլև ողջ գյուղացիք), խուապված շրջող լուրերից, որ ասպատակությունները կրկնվելու են նաև Հաջորդ տարի<sup>15</sup>, խնդրում են վրաց Հերակլ թագագորին՝ թույլ տալ Հեռանալու ավելի ապահով վայրեր, և վերջինի համաձայնությունն առնելով՝ «բոլանդակ աղխիւր իւրեանց գնացին ի Տփխիս, ուր և կացին նոքա զամս շորս, յորս ամայի եկաց գիւղ նոցա Հաղբատ, որպէս և վանքս»<sup>16</sup>: Եթե անգամ 1786-ը ճիշտ լիներ, ապա այդ պարագայում վանքն ու գյուղը ամայի են եղել վեց տարի շարունակ, մինչև 1792 թվականը, և ոչ նաև այս թվականը, թեպետ այդ տարի ու արշավանքներ են եղել:

Վրացական ժամանակագիրներն էլ (ինսե Բարաթաշվիլի, Անանուն աատմիշ, Դավիթ Բագրատիոն, Բագրատ Բագրատիոն) լեկպիների նոր արշավանքը դեպի Սոմիսիթ (Վրաց թագավորությանը կցված հայկական գավառները—Պ. Հ.) և, մասնավորապես, Լոռի, դիտում են 1785 թ. տեղի ունեցած<sup>17</sup>: Ճիշտ չէ նաև այս թվականը:

Հերցին տարիներս գիտական շրջանառության մեջ են բերվել Իլուսիալի արտաքին հարաբերություններին վերաբերող մի շարք վավերագրեր՝ գրված լեկպիների վկրք ներխուժած օրերին, որոնք պարզ ու հստակ մատնաշում են, որ խոսքը 1784 թ. ամառվա մասին է<sup>18</sup>: «Վրաստանի բոլոր ճանապարհները բռնված են, ինչպես վարակ, լեկպիներով»,—գրում է գնդապետ Ս. Գ. Բուրնաշեր 1784 թ. հունիսի 6-ին<sup>19</sup>: «Կաղուց է, որ այսպիսի իրարանցում չէր եղել վրաստանում»,—նույն տարվա նոյեմբերի 29-ին Հաղորդում էր Հերակլ թագվորը<sup>20</sup>:

Աւսպիսով, Հաղբատի երկրորդ ամայությունն սկսվելով 1784 թ. նոյեմբերի կեսերից (Դավիթի առաջնորդության օրերից), շարունակվում էր գեռ 1792 թ. ամռանը: Նույն տարվա Հոկտեմբերին, Հերակլ թագավորին ուղղված մի նոր կոնգակում<sup>21</sup>, Ղուկաս Կարնեցին կրկին գանգատվում էր Դավիթ վարդապետից, խնդրում հարկադրել սրան՝ վերադառնալու Հաղբատի վանք և շենացնելու այն, այլև Հրամայել Հաղբատի ցրված գյուղացիներին՝ դառնալու իրենց գյուղը, «ի հաստատութիւն շինութեան սրբոյ վանացն»: «Մեք զդա (Դավիթին—Պ. Հ.) եպիսկոպոս և առաջնորդ եմք արարեալ, որ միաբանիւրն ի վանքն նստցի և շինութիւն առնիցէ», և ո՞չ թե Տփիսում զեխ կյանք վարի, դառնացած ասում է Ղուկաս Կարնեցին և ապա՝ ժամանակավորապես կարգալույթ անելով՝ գրկելով նրան եպիսկոպոսական աստիճանից, բայց ո՞չ բեմի

<sup>15</sup> «Յովհաննու Դրիմեցոյ Պատմոթիւն», էջ 127—128:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 128:

<sup>17</sup> Լ. Մելիքսեբ - Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հատ. 7, Երևան, 1955, էջ 166, 189, 201 և 227:

<sup>18</sup> Տե՛ս Օ. Պ. Մարկովա, Ռուսական և մասնաւորագործության մասին պատմությունները, Երևան, 1966, էջ 180—183:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 180:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 181:

<sup>21</sup> Նամակը, Հավանաբար, գրված է Հոկտեմբերի 13-ին, որովհետև այդ օրը Դավիթ վարդապետը էջմիածնում էր, Հանդիպել էր Ղուկաս Կարնեցու հետ, նվեր ստացել (մեկնման առիթով). տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 156:

առաջնորդությունից, պայման է դնում, որ գոնե երկու տարիա միջոցում («պայմանաւ ժամանակի երկուց ամաց»), հանդերձ «միաբանիքն երթեալ ի սուրբ վանքն նստցի...»<sup>22</sup>, որից հետո նոր կվերականդավեն հին պատիվները:

Դավիթն, իհարկե, երկու տարի անցնելուց հետո չ Հաղբատ չվերադարձավ, ո՞չ էլ ուղևորվեց էջմիածին՝ Ղուկաս Կարնեցու ուրբա ընկնելու և բանադրանքից ազատվելու համար (Հակառակն հաստատող որևէ վավերադիր գուտթյուն չունի): Հետո սկսվեց Աղա-Մահմադ-խանի արշավանքը, ավերվեց Տփղիսը, Հաղբատի վանքի միաբաններից երեքը նահատակվեցին, առաջնորդը գերվեց ու քանի հանձակ, իսկ վանքի հարստությունը և կարևոր ձեռագործը, որ Տփղիսում էին, թալանվեցին<sup>23</sup>: Միայն 1799 թ. նշանակվեց Հաղբատի նոր առաջնորդ՝ Սարգիս Բ. Զալալյանցը<sup>24</sup>: Սա հավաքում է ցրված միաբաններին և տասն ու հինգ տարիների ամայությունից հետո վերստին չուն տալիս հին մենաստանին: Այսուհետեւ արդեն վանքն անրնդմեց գործում է:

Այժմ դառնանք Սայաթ-Նովալին, վերջիշելով նախ և առաջ նրա աշխարհական կյանքի վերջին շրջանի հավաստի դիպվածները, ավելի ճիշտ, այն բոլորը, ինչ անառարկելիորեն հայտնի է նրա մասին, 50-ական թթ. վերջերից սկսած:

Ա. 1759 թ. ապրիլի առաջին օրերը Սայաթ-Նովան հորինում է մեղ հաւոնի թվակիր վերջին խաղը՝ «Աշխարրս մե փանջարա է.—թաղերումեն բեղարիլ իմ...», որն ապա մուծելով իր խաղերի դավթարի մեջ, վերջում դրում է. «Էսպես Արութինի ասած՝ ապրիլի իսկդրան, քրոնիկոնի 447-ին» (-447+1312=1759)<sup>25</sup>:

Բ. 1765 թ. մայիսի 1-ին Պենտելենց Յովանեն Սայաթ-Նովայի խաղերի դավթարի վերջում դրում է իր նշանավոր Հիշատակարանը, հավաստիացնելով ընթերցողին, որ բոլորի հեղինակները Սայաթ-Նովան է, և աղերսելով՝ «Լավութենով ու ողորմի տալով» հիշել նրան<sup>26</sup>:

Գ. 1766 թ. Սայաթ-Նովան՝ արդեն ձեռնադրված, Ստեփանոս քահանա անունով, հովվում էր Զաքաթալայի Կախոս քարվանսարայում (ավանում) և կազմում է իր ժողովածուն: Այդ դրշագիրը պահպատմ է Մատենադարանուն (№ 4270) և պարունակում է Ս. Գրիգ առանձին մասեր և տոմարական հատվածներ<sup>27</sup>: Այս ժողովածուն ստեղծելու գաղափարի սոսկական հղացման, իսկ

<sup>22</sup> «Դիվան հայոց պատմութեան», դ. Դ, էջ 590:

<sup>23</sup> «Յովհաննու Ղրիմեցոյ Պատմութին», էջ 128, Ռ. Երգնկյանցն ևս վիայում է. որ սԴարիթ արքեպիսկոպոս Խերողինեանց վիճակաւոր առաջնորդ վանից Հաղբատայ և հրաստանի նստեալ ի Տփղիս ի Կաթողիկէ բերդի եկեղեցւոչ՝ վախճանեցաւ...» (տե՛ս նշան՝ աշխ., էջ 88):

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>25</sup> Սայաթ-Նովա, լուս գցած աշխատամիրութենով Գ. Ախովերյան, Մոսկվա, 1853, էջ 136—137 (այսուհետև՝ Գ. Ախովերյան):

<sup>26</sup> Նույն տեղում, էջ ԺԴ:

<sup>27</sup> Սայաթ-Նովան քահանա է զարձել 1759—1766 թթ. միջեւ Ընդունված կարդով որևէ աշխարհականի հողերը կոչում տալու կամ վանք ուղարկելու համար վրաց թաղավորները պետք է թուղարժություն ստանային ամենայն հայոց կաթողիկոսից (Հմմտ. Շիվան հայոց պատմության), դ. Դ, էջ 601): Որպեսդի հշտվի վերջականապես Սայաթ-Նովային քահանա ձեռնադրելու թվականը, առաջիկայում Հարկ կլինի հանգամանորեն ուսումնասիրել վրաց արքայական տան և էջմիածնի վեհապետների՝ Հակոբ Եամախեցու (1759—1763) և Սիմեոն Երևանցու (1763—1780) նույն տարիների (1759—1766) փոխադարձ գրագրությունները:

Լ. Մելիքսեթ-Բեկը ժամանակին անհնար է համարել սբոզել, թե ո՞վ է եղել Սայաթ-Նովային քահանա ձեռնադրողը և, հետագայում նաև, վեղար տվողը (տե՛ս «Վրաց աղբյուրները», Հատ.

այնուհետև՝ լիակատար որականացման համար լոկ, առանց այլայլության, պիտի սահանջվեր բավականաշափ ժամանակ: Այստեղից էլ պիտի ենթադրել, թե Սայաթ-Նովան քահանա է ձեռնադրվել (որի մեջ հավասարաշափ դեր են խաղացել և ներքին մղումը, և արտաքին հարկադրանքը) 1765 թ. Երկրորդ կեսից ոչ ուշ: Պենտելենց Յովանեի վկայակոչված Հիշատակարանը՝ խաղերի դավթարի վերցում, երկի դրա անուղղակի արձագանքն էր և յուրօրինակ վերջակետ Սայաթ-Նովայի աշխարհական տարիների մտորումների ու տառապանքների, հսկ Կախո քարվանսարայում կազմված ժողովածուն՝ յուրատեսակ ապաշխառություն մի ժամանակ գործած «մեղրերի» թողության համար:

Տ. 1766—1768 թթ. միջև Սայաթ-Նովայի խաղերի դավթարում ստվերագծում են վրացերեն երկու հիշատակարան, որոնց հեղինակն իր բաղձանքն է հայտնում Տեր Ստեփանի վերադարձի մասին («Երանի աստված տեր Ստեփանին ողջ և առողջ վերադարձի»)<sup>28</sup>:

Ե. 1768 թ. վախճանվում է Սայաթ-Նովայի կողակից Մարմարը և Բաղվում Խոչեմանքում (տապանագիրը ժամանակին արտադրել և հրատարակել է Գ. Ախվերդյանը)<sup>29</sup>:

Այսպիսով՝ ուղիղ տասը տարի (1759—1768), և միայն հինգ կցկտուր տվյալ:

Սայաթ-Նովայի կենսագրությունն, առհասարակ, շատ է հարուստ լեզերով՝ գայթակղից ու խորհրդավոր դիսլվածներով: Եթե մինչև 1768 թ. դրանք սոսկ ուղեկցողի դեր են ունեցել և զատվել են երգչի կյանքի ձշմարիտ դրվագներից, այսուհետեւ սոմեն ինչ խճճված է, մենք չունենք ուղղակի և ոչ մի կովան: Առկա են սոսկ բազում ենթադրություններ և տարիների ավերումներից աղոտացած ու այլափոխված ավանդություններ:

Հասցնելով Սայաթ-Նովայի կենսագրությունը մինչև 1768 թ., Գ. Ախվերդյանը, որին անհաւատ է մնացել 1765—66 թթ. միջև, կոնց մահվանից էլ առաջ երգչի բահանա ձեռնադրված լինելո, ասում է. «Վերշապես ձանձրացած էս երազական կյանքի վայելչություններից, Սայաթ-Նովու խանդակաթ սիրտն.. պատում է սիայնակեցությունն, որո ծարավն էնքան սաստիկ է րլում, որ իր դափակներու Թիֆլիզում թողած՝ զնում, հեռանում է Հաղպատու Սուրբ Նշան վանքն, որտեղ կրոնավորած ձեռնադրվում է աբեղա»<sup>30</sup>: Հստ Գ. Ախվերդյանի՝ Սայաթ-Նովայի կրոնավորության մոտավոր տարին 1770 թվականն է<sup>31</sup>:

Փոքր-ին, վերախմբազրված ձեռվ՝ այս կարծիքը պաշտպանում է նաև անվանի բանասեր Մ. Հասրաթյանը. «Կնոց մահից մի քանի տարի հետո, երկի 1770-ական թթ. Սայաթ-Նովա—Տեր Ստեփաննոս քահանային վանականի (վարդապետի) աստիճան են շնորհում և փոխադրում իր հայրենի Հաղպատի վանքը՝ «Վրաց տան» հայոց հոգեոր թեմի կենտրոնը», — գրել է նաև և առաջ անելով այլկառ ենթադրություններ, արդեն մատնանշել մոտավոր, բայց որո-

Գ. էջ 260): Ի՞սա անլուծելի հարց չէ: Հաղբատի առաջնորդը 1751—1770 թթ. եղել է տփիսիսցի Զաքարիա Պաթինյան վարդապետը (տե՛ս «Ճողականու Ղրիմեցոյ Պատմութին», էջ 116 և 120): Նա լի ձեռնադրել, իսկ հետագայում վարդապետական վեղար է տվել Սայաթ-Նովա—Տեր Ստեփանոսին:

<sup>28</sup> Սայաթ-Նովայի Խաղեր (Նմանահանություն), Երևան, 1963, էջ 24—84 (մեջբերումը բառ լ. Սելիքսեթ-Բենեկ թարգմանության: Տե՛ս «Վրաց աղբյուրները», հատ. Գ. էջ 149):

<sup>29</sup> Գ. Ախվերդյան, էջ ԺԱ:

<sup>30</sup> Նույն տեսում, էջ Ժ:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ Ժ:

շուղի տարի. «Ավելի հավանական է, որ Սայաթ-Նովան վարդապետ ձեռնադրոված լինի 1775 թվականին, կնոջ մահվանից յոթ տարի հետու Հաղպատում Սայաթ-Նովան լուսարտի պաշտոն է ստո նձնում...» և այլն<sup>32</sup>:

Վերեռում արդեն տեսանք, որ ո՞չ միայն 1770 թ., այլև 1775 թ. Հաղպատի վանքն ավեր ու ամայի էր, հետեաբար, զոնե մինչև 1777 թ. կամ Հաղպատի առաջին ամայության վերջին տարին. ո՞չ մի աարագայում Սայաթ-Նովան Հաղպատում չէր կարող լինել: Սա անվիճելի է:

Իսկ որտեղ պիտի որոնել նրան:

Հայոց եկեղեցու Կանոնագրքից («Կանոնագրքի Կեսարացւոյ») հայտնի է, որ Հոգեութականներին արդելվում էր երկրորդ ամուսնություն («Է. իսկ գերլիլորդ ամուսնությունն ամենեին իսկ կանոնք արդելուն ի սպասաւորութենէ»)<sup>33</sup>: Հայտնի է նաև, որ երբ ծխատեր քահանան այրիանում էր. «ասկա պարտի թողով ստեղի իւր և մտանել ի վանս ուր բնկայեալ լինի ի շարս վարդապետաց»<sup>34</sup>: Հակառակ պարագայում՝ պետք է հրաժարվեր սքեմից և եկեղեցականությունից<sup>35</sup>: Այս օրենքները շատ խիստ պահպանվում էին և վերանայմեցին միայն ներկա դարում, Գևորգ Ե կաթողիկոսի օրոք:

1768 թ., կնոջ մահվանից հետո, Սայաթ-Նովա—Տեր Ստեփանոս քահանան, ուղեր թե չուղեր, պետք է ենթարկվեր այս կարդ ու կանոնին և վերադառնար մայրավանքը կամ գործող վանքերից մեկը այն թեմի, որի ծխատերին էր ինքը<sup>36</sup>:

Բուն վրաց աշխարհում սփոված հայկական բնակավայրերը և Տփղիս քաղաքը ենթակա էին Հաղպատի թեմին: Վերջինի վիճակն էին նաև Վրաստանին կցված հայկական բնակավայրերը: Ե՛վ այնտեղ, ե՛ այստեղ եղած միակ վանքը Հաղպատի Սուրբ Սշանն էր, այն էլ, ինչպես տեսանք, 1740-ական թթ. ամեր ու տնմարդաբնակ էր: Թեմի այդ տարիների առաջնորդ և վանահայր Զաքարիա Պաթինյանը, նախորդների պես, միաբաններով հանդերձ Տփղիսում էր աւատիղից էլ վարում էր «զպաշտօն հովուաթետն»<sup>37</sup>:

Հաղպատի թեմի առաջնորդներն ու միաբանները Տփղիսում նստում էին Բերդի կաթուղիկե եկեղեցում, որ կոչվում էր Ս. Աստվածածին<sup>38</sup>: Եկեղեցու պարսպի ներսում կայացած էր Սայաթ-Նովային փոխադրել են «իր հայրենի Հաղպատի վանք», պարզ չէ: Սանահին և Հաղպատ դյուքսը իրարից հեռու են և ենթակա էին տարբեր թեմերի:

<sup>32</sup> Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, աղբեշաներեն խաղերի ժողովածու, կաղմես, խմբագրեց և ծանոթացրեց Մ. Հասրաթյան, Երևան, 1963, էջ ՀՀՀՀ—ՀՀՀՀ: Բատ Թեյմուրազ արքաւազնի մի հայտարարության (1835—1837 թթ. միջն), որի վրա վաստորեն հենմում է նաև Մ. Հասրաթյանը (էջ ՎԻԻ), Սայաթ-Նովան ծննդյամբ Սանահին դյուղից էր: Ի՞նչո՞ւ նման պարագայում նա դրում է, թե Սայաթ-Նովային փոխադրել են «իր հայրենի Հաղպատի վանք», պարզ չէ: Սանահին և Հաղպատ դյուքսը իրարից հեռու են և ենթակա էին տարբեր թեմերի:

<sup>33</sup> «Կանոնագիրը Հայոց», աշխատասիրությամբ ։ Հակոբյանի, Երևան, 1964, էջ 341:

<sup>34</sup> Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, Հատ. VII, Երևան, 1956, էջ 325:

<sup>35</sup> Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, Անթիկաս, 1952, էջ 127:

<sup>36</sup> Երբ այրիացած քահանան վանք էր մտնում, նա ստանում էր սուկ արելզական կնկող, իսկ անունը չէր փոխում. նրան շարունակում էին կոչել հին ձեռվ (տվյալ դեպքում՝ Տեր Ստեփանոս). ապացույց՝ նույնանձան մեկ ուրիշ հոգևորական, նախկին արքի քահանա, հետո բեղադրի վանահայր Տեր Հովհանն նախիջեանցին (տե՛ս Հ. Օ հիամթունյան, Հատ. II, էջմիածին, 1842, էջ 289 և 291):

<sup>37</sup> «Յովհաննու Ղրիմեցոյ Պատմութիւն», էջ 119—120 և 146:

<sup>38</sup> Ս. Զայալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն թ, Տփղիս, 1858, էջ 60:

Սայաթ-Նովան 1768 թ. վերադառնալով Տփղիս, պետք է հաստատվեր Բերդի կաթուղինե եկեղեցում, այս անդամ իբրև ինդուղավոր արեղա:

Տփղիսում, 1768 թ. սկսած՝ Սայաթ-Նովան անցկացնում է ավելի քան ինը տարի, անշուշտ, հին հուշերով ու նոր գառնություններով շափաղանց հարուստ տարիներ, որոնց վերաբերյալ տառացիորեն ոչինչ չգիտենք ո՛չ ուզդակի ո՛չ էլ անուղղակի աղբյուրներից:

1778 թ., երբ Աբրահամ վարդապետը, միաբանությամբ հանդերձ, փոխադրվում էր Հաղբատ, Սայաթ-Նովան էլ, անտարելույս, նրա հետ պիտի լիներ: Այդ ժամանակ նա վաթսուն տարեկան էր, շատ ասլրած ու տառապած: Միայն այս թվականից կարելի է խոսել Սայաթ-Նովայի կրոնավորության մասին Հաղբատի վանքում և բատ այդմ վերբնթերցել հին լեղենդները:

Աբրահամ վարդապետի և միաբանության՝ Տփղիսից Հաղբատ փոխադրվելուց հետո հերդի կաթուղիկե եկեղեցին, անշուշտ, չի «ամայանում», այնտեղ դարձյալ մնում են պատշտաճ թվով կրոնավորներ՝ արարողություն կատարելու և դորժակալական պատշտաճ վարելու:

Կարող էր սպատաճել, իհարկե, որ Սայաթ-Նովան էլ Տփղիսում մնացող-ների մեջ լիներ, բայց այդ վարկածը առաջմ բացառում ենք և ավանդության հետեւթյամբ նրան փնտրում ենք Հաղբատում, ուր 1778 թ. առաջ ո՛չ մի պարագայում նա չէր կարող փոխադրված լինել:

Գ. Ախվերդյանը ժամանակին դրի է առել մի դրույց: Որպես թե Հաղբատում եղած միջոցին (1778 թ. կամ հաջորդ տարիներին). մի սասափկ ձևեռ, Սայաթ-Նովան լուր է առնում, թէ Տփղիս է եկել մի հայտնի աշուղ, և մրցություն է լինելու: Չուղենալով արատավորված տեսնել հայրենի քաղաքի պատիվը՝ ձյանն ու ցրտին, ծալոված, նա Հաղբատից շտապում է Տփղիս, Քոի կամուրջի տակ, սառույցի վրա նրա հետ մրցության մեջ մտնում ու հաղթում: Շնդեցիկ է լեզենդն ինքյան, բայց հաղիվ թե համապատասխաներ 60-ամյա մի աբեղայի, որն արդեն շուրջ քսու տարի ձեռք էր քաշել «սոյբաթից, սազից»: Ախվերդյանին էլ ճշմարտանման չի թվացել այս դրույցը<sup>39</sup>:

Կյանքը Հաղբատում առաջին տարիներին ծանր էր: Աբրահամը ձեռնարկել էր շինարարական ու վերակառուցման րնդարձակ աշխատանքներ, որոնք կլանում էին հսկայական միջոցներ: Դրամ գտնելու հույսով նա ու իր փոքրավոր խախտում ու խորտակում են հին մահարձաններն ու շինությունների հիմքերը, խուղարկում վանքի թաքսուցներն ու Հաղբատաձորի այրերը: Այս շրջանում են բաց անում ջրաղացի ձորի «Գրոց քարայրը» կամ Շակալարը, գուրս բնրում գեռաւ միջին դարերից այնակեղ պահվող բազմաթիվ ձեռագրեր, ամբողջականները փոխադրում վանք, իսկ խիստ քայլքայլածներն ու փրցված թերթերը՝ հրդեհի ճարակ դարձնում: Սայաթ-Նովան պետք է ականա-աես եղած լիներ բարբարոս և խավարամոլ այդ արարողությանը<sup>40</sup>:

Գ. Ախվերդյանը, ժողովրդի բերանից առնելով՝ հիշում է նաև մի թեավոր խոսք, որպես թե Հաղբատում կրոնավորներու օրերին Սայաթ-Նովայի ասած՝

Հաղպատու լուսաւար Սայաթ-Նովեն իմ.

Մե կանքեղիս վատելու ձեր շունիմ...<sup>41</sup>

<sup>39</sup> ՏԵ՛ս Գ. Ախվերդյան, էջ ԺԲ:

<sup>40</sup> Մանրամասնությունները տե՛ս «Յոսհաննու Ղրիմեցոյ Պատմութիւն», էջ 123—124:

<sup>41</sup> Գ. Ախվերդյան, էջ ԺԲ:

Աւստրիական ճիշտ և ճիշտ պատշաճում են 1778 թ. սկսած Հաղբատում տիրող իրավիճակնեն: Անհավանական չենք գտնում, որ, ինչպես մեջբերված երկտոռն է վեայում, Հաղբատ փոխադրուելուց հետո, Սայաթ-Նովային վըստահմեր վանքի լուսարարությունը: 1766 թ. Կախո քարվանսարայում Սայաթ-Նովայի կազմած գրշագիրը պատցուցում է, որ նա լավ է կողմնորոշվել եկեղեցական օրացուցի խրթնաբանությունների մեջ:

1784 թ. ուշ աշնանից, ինչպիս նշեցինք, սկսվում է Հաղբատ դյուզի ու վանքի երկրորդ, լրակատար ամայությունը, որ տեսում է մինչև գարավերջ: Նոր առաջնորդ Դավիթ Թավելդարովը ու իր միաբանները նորից ապաստան են ստանում Տփդիսում: Այսուհետեւ Սայաթ-Նովային, առանց այլայլության, գարձյալ պիտի ըրոնել Տփդիսում, որ և նա մնում է մինչև իր ողբերդական վախճանը (1795, սեպտեմբեր):

Բայց կարող էր մայրավանքը ավելի շուտ գատարկվել սկսել, քան գյուղը: Հայտնի է, որ 1783 թ. լեկղիների նոր արշավանքի վտանդ կար, որը ահաբեկել էր շատերին՝ դրդելով օր առաջ խույս տալ ապահով վայրեր<sup>42</sup>: Անուղղակի տվյալներից կուահվում է նաև, որ Դավիթի նախորդ Խորակել կաթողիկոսը, տակավին Հաղբատավանից առաջնորդ, նույն 1783 թ. Տփդիսում էր: Այդտեղ էր հաստատվել նաև Սանահնի վանքի առաջնորդը<sup>43</sup>: Նրանք, Հարկավ, միայնակ չէին, այլ ստորադաս վանականների շքախմբով: Հակված ենք կարծելու, որ Սայաթ-Նովան էլ նրանց հետ պիտի լիներ: Մանավանդ որ, բայտ անառարկելի վակերադրերի, 1784 թ. սկզբներին Տփդիսում ապրում էր վեղար կրող Տեր Ստեփան անունով մի հոգեռական<sup>44</sup>, որպիսին Սայաթ-Նովան էր այն ժամանակ: Ծիշակ էր հիշատ պիտի հոգեռականության շրջանում այն տարիներին Տեր Ստեփան[ու] անունով շատերը կային, բայց այդ շատերի մեջ 1784 թ. միան մեկն է, որ ուներ վեղար, այսինքն՝ այրի քահանայությունից վանականների դասն էր անցել և անդամ մեծարվում էր ամենայն հայոց կաթողիկոսից: Այդ անձը հենց Սայաթ-Նովա—Տեր Ստեփանն էր:

Սայաթ-Նովայի՝ Հաղբատում ապրած ժամանակամիջոցն, այսպիսով, այնքան կարճատես է եղել, որ հետագայում ծեր ու ջահել միաբաններից ու վանքի պատմագիրներից և ոչ մեկը չի հիշել նրան: Անտեսման արժանի իրուղություն չէ, որ ժամանակին Գ. Ախվերդյանը զանք չի ինայել մշուշը փարատելու և որևէ բան իմանալու, բայց արդյունքի չի հասել: «Հաղպատում մեծ ծեր էլ չկա, որն որ իմանում ըլի գոնե մեկ ավանդություն էս աննշան կը ունավորի վրա»,—ցավով արձանագրել է նա<sup>45</sup>:

Կա հին գրուց, ըստ որի մինչև 1795 թ. Սայաթ-Նովան մնացել է Հաղբատում, և այդ տարին, լուր առնելով Աղա-Մահմադ-խանի արշավանքի մասին, շտապել է Տփդիս, ղավակներին մի կերպ Մողղոկ հասցրել, իսկ ինքը կրկին դարձել է բաղար և դոհիլել աղոթելու ժամանակ, կուրուգիկ եկեղեցու մեջ<sup>46</sup>:

<sup>42</sup> ՏԵ՛՛ Օ. Պ. Մարկով, նշվ. աշխ., էջ 178:

<sup>43</sup> ՏԵ՛՛ ՌԴիվան Հայոց պատմության, գ. Դ, էջ 492 և 506 (նկատի ունենք «գնացեալ իւորհնեալ քաղաքն Թիֆիհը» և «եկեղեւ յայոր (=Տփդիս) հարայէլին ծառայելով...» արտահայտությունները):

<sup>44</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 120:

<sup>45</sup> Գ. Ախվերդյան, էջ ԺԱ:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ ԺԲ:

թևետ այս զրուցի մեջ առկա են չին, իրական դիպածների արձագանքներ, բայց ժամանակադրությունը սխալ է: Իրար են մոտեցված երկու տարբեր դեպքեր՝ զավակներին Մոզդոկ ուղարկելը և մահը, որոնց միջև իրականում ընկած է ավելի քան տասը տարի ժամանակամիջոց:

Անառարկելի վայերառերից հայանի է, որ Սալաթ-Նովայի որդիքը (Հոհաննեսը և Մելքիսեթը) 1785 թ. արդեն վաճառականներ էին կղարում (ավելի ուշ նրանք հաստատվում են սողոկում) և այդ տարվա (1785 թ.) մարտի 5-ին էջմիածնի օգոստին նվիրաբերում են անում. «Սայաթնակի որդիքն ետուն եծ [դիան]»<sup>47</sup>, այնպես որ, նրանք պիտի հոդային իրենց հոր կյանքի ապահովության համար և ոչ ընդհակառակը. Այս ևս մի լուրջ կովան է հաստատելու, որ Սայաթ-Նովան լեկղիների սպասվող ասպատակությունների պատճառով Հաղբատից Տփղիս էր եկել իսկապես 1784 թ. Կամ նախորդ տարին, ապահով տեղ ուղարկել զավակներին և հաջորդ տասնամյակը կրկին նվիրվել աղոթքի ու վանական ժառայության:

Սայաթ-Նովայի կյանքի վերջին տասը տարիների մասին բացարձակապես ոչինչ չդիտենք. Տփղիս վերադառնալուց հետո, 1784 թ. սկսած՝ նրա կաղարաւնն, անշուշտ, Բերդի կաթուղիկե եկեղեցու պարսպապատի խուցերից մեկը պիտի լիներ, բայց անհավանական չէ, որ նա ժամասացություն կատարեր նաև Տփղիս՝ Հաղբատի թեմին ենթակա բազմաթիվ եկեղեցիներից մեկում, թերևս, սուղնու սուրբ Գևորգում, որի վերաշինման առիթով շատ տարիներ առաջ հորինել էր մի շափածո դոփք<sup>48</sup>: Մանավանդ որ Տփղիսի ավերման օրերին հիշվում է սրա բակում նահատակված մի ծերունի հոգեորական՝ Տեր Ստեփան:<sup>49</sup> Այդպես էին կոչում երդշին նաև նրա մերձավորները. «Երանի Տեր Ստեփանը ողջ և առողջ գա...», աՅստեղ աստված Տեր Ստեփանին ողջ և առողջ վերադարձնի...»<sup>50</sup>, Գիտենք, որ Տեր Ստեփանի նկատմամբ առանձին բարեհաճություն էր ցուցաբերում նաև Ղուկաս Կարսեցին և դեռևս 1784 թ.

<sup>47</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 5/37, էջ 43, տող 23 (հմմտ. «Երևան», 1963, № 251) և ձեռագիր № 2914, թ. 146տ (հմմտ. «Սովետական Հայաստան», 1963, № 186):

<sup>48</sup> Մասրաթյանն այդ բանաստեղծությունը վերագրում է 1751 թ. (տե՛ս Սայաթ-Նովա, Երևան, 1963, էջ 82 և 255). մինչեւ եկեղեցու շինարարական արանագրությունը մատնանշում է այլ թվական. «Թվին Ու երկարիրին Ե. անցելոյ երրորդ ամին» (=1205+3+55=1759). տե՛ս Ս. Զալալյանց, նշվ. աշխ., մասն Բ, էջ 69: Ըստ այդմ էլ խաղը գրված պիտի լինի 1759 թ. ոչ առաջ:

Անձտության սրաման, ըստ երկութին, Մուղնու Կամակատար Աստվածածին կոված եկեղեցու վերանորոգման արձանագրությունն է՝ Հաղար կաթողիկոսի կենզանության: օրերում կատարված (տե՛ս Ս. Զալալյանց, նշվ. աշխ., էջ 70: Արձանագրության մեկ այլ, հնագույն արտագրություն տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 29/125): Հաղար կաթողիկոսը վախճանվել է 1751-ին: Վերանորոգությունը, ըստ այդմ, դրանից առաջ է եղել: Բացի արդ, Սալաթ-Նովայի համապատասխան խաղը նվիրված է ոչ այս եկեղեցու, այլ Մուղնու Առորա եկեղեցու նորողմանը [«Հիմքու վերըստին նորեցին, շաղ արին, Մուղնու սուրբ Գեղվորգ...»], որ 1759 թ. է տեղի ունեցել:

<sup>49</sup> Տեր մադանյան, Նյութեր աղքային պատմության համար: Երևելի Հայկագունք և Պարսկաստան, Մոստով, 1890 (շապիկի վրա՝ 1891), էջ 69:

<sup>50</sup> Սայաթ-Նովա, Խաղեր (նմանահանություն), էջ 24 և 84: Լ. Մելիքոս Երեկ, Վրաց աղբյուրները, հատ. 7, էջ 149:

մարտի 12-ին նվիրել (թէ՝ ուղարկել) էր նրան մի շալ փիլոն և մի վեղար<sup>51</sup>, որ կուսակրոնության (վանականության) համար էր<sup>52</sup>:

Գալուստ Շերմազանյանը, զեռ Ներսիսյան դպրոցի աշակերտ (1823—1826), և՛ իրենց տանը, և՛ ուսուցչի՝ Պռղոս Ղարադաղցու ներկայությամբ, լսել է քահանա Տեր Մելիքսեթից «Ճերունի Տեր Ստեփանի» խոշտանդման մանրամասները; Մասամբ ուղղակի, մասամբ անուղղակի խոսքերով՝ նա այսպիս է վերաշարադրել դիավածը. [Պարսիկների] «զորքի ծերը մեղ հասավ, գնալով-գնալով շատանում էին նոքա, իսկ մենք գոները կոդակեցինք, որ պատերի գլխից և կտուրից մեզ պաշտպանենք: Կաշտպանեցինք մերձ մեկ ժամ, մինչև որ մեր վասողը վերջացավ, էն ժամանակը պարտավորեցանք անձնատուր լինիլ, հավատալով նոցա խոստումին և երդումին, որ մեզ չեն վնասիլ»: Ընդհակառակն, պարսիկները սկսան նախ հրացանի կոթով, մտրակով և աքացիով ծեծել գծերերն ու չափահասները, որպեսզի նոքա դարանի տեղեր ցուց տան, բայց երբ տեսնում են, որ էս միջոցով չեն կարողանում ասել տալ, այնուհետև սկսում են դաշույնով և թրով ժակծել, ուստի և շատերն արյունաքամ են լինում ու գետնի վրա թավալվելով՝ անշնչանում: Երբ էս հնարքով ևս չեն արդյունավորում, կրակ են վասում հրապարակի մեջտեղը, ոտքի տակ տալով տանում են կրակի մոտ զՏեր Գեորգն ու ծերունի Տեր Ստեփանը, կեծեծ կաթսաներ են դնում նրանց գլխին, որից նոքա շուտով մեռնում են»<sup>53</sup>:

Ինչո՞ւ չհավատալ, որ այս Տեր Ստեփանը հենց Սայաթ-Նովան էր:

Լ. Մելիքսեթ-Բեկը, որը մասնավորապես Սայաթ-Նովայի վախճանի հարցում անվերապահ հավատ էր բնծայում վրաց արքայազն Բոանե Բաղրամիոնի «Կալմասորայի» մեջ առկա տվյալներին (դրանց կանգրադառնանք ստորե), ոչ մի կերպ չէր ուղում հաշտվել թեկուզ հնարավոր այն ենթադրության հետ, որ 1795 թ. սեպտեմբերի 11-ին Տփղիսի Մուղնու Ս. Գևորգ եկեղեցում նահատակված Տեր Ստեփանը կարող էր լինել Սայաթ-Նովան<sup>54</sup>:

Բայց այստեղ անհավանական բան չկա: Լ. Մելիքսեթ-Բեկը դրել է, թե իրեն համամիտ է նաև Հասրաթյանը<sup>55</sup>, սակայն Հասրաթյանի կաղմած ժողովածուր մատնանշած էցում (1959, էջ 307) Շերմազանյանի այս վկայության մասին բացարձակապես ոչինչ չի ասված, դուցե նրա ուշադրությունը չի էլ պրավել:

Թեպետ Ստեփանոս ակունը հոգեորականության շրջանում, մատնանշած տարիներին, շատ էր տարտծված, բայց, կրկնում ենք, Մուղնու բակում նահատակված Տեր Ստեփանը, շատ հնարավոր է, որ հենց Սայաթ-Նովան էր: Մասնավանդ որ, ինչպես տեսանք, այս եկեղեցու հետ Սայաթ-Նովան առանձնապես կապված էր (գուցե ծնողները նրա ծխերից էին), ներբող էր գրել նրա վերաշինման առիթով և, եթե մեր կուհումը ճիշտ է, ճակաաադրի բերումով նրա առաջ էլ գտնել է իր ողբերգական մահը:

Պատմական սասույդ առյուրներում ասված է, որ Տփղիսի ավերման օրը Հաղբատի միաբաններից դոհվել է: Իրեք վարդապետ, առանց սակաւն հակա-

<sup>51</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, № 2/11, էջ 120 (նվերը մատուցվել է «Տեր Ստեփանին Թիֆլիս»):

<sup>52</sup> Հմատ. Մ. Օր մանեան, Հայոց եկեղեցին, էջ 130:

<sup>53</sup> Գ. Շերմազանյան, նյութեր ազգային պատմության համար, էջ 67—69:

<sup>54</sup> Լ. Մելիքսեթ-Բեկը, Հայ դրողները և Վրաստանը, Երևան, 1964, էջ 80—81:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 81:

նե հանվանե նրանց հիշելու<sup>66</sup>: Տրամաբանությունը թույլ է տալիս հավանական համարելու, որ այդ երեքից մեկը հենց Սայաթ-Նովան էր:

Վերջապես չպետք է մոռանալ, որ Սայաթ-Նովայի առաջին կենսադրությունը հյուսողի՝ Գևորգ Ախվերդյանի որոնումներն ևս հանգեցրել են երդշի սպանության վարկածին: Գ. Ախվերդյանի անմիջական աղբյուրը Սայաթ-Նովայի ժառանդները և նրան ճանաշող անձինք են եղել, առաջին հերթին թոռը՝ Մովսես Ասյաթնյանց քահանան, մի լուրջ և գարզացած հոգևորական: Ով ով, բայց թոռը ամենից ավելի հետաքրքրված սիխտի լիներ իր հանճարեղ պատի ձականագրով, շատ վաղուց հետամտած՝ հոր ու հորաքույրերի միջոցով ձշմարտությունն իմանալու նրա մահվան հանգամանքների, տեղի, ժամանակի մասին: Անհամատալի բան է, որ Աղա-Մահմադ-խանի արշավանքներից հետո, երբ յոթ օտարն էր հետաքրքրվում էր տփղիսեցիների ձակատագրով, անծանոթ խնդրողին անգամ միջոցներ տրամադրում՝ գերության մեջ դտնվող ազգականներին փրկագնելու համար, Սայաթ-Նովայի ժառանգները, որոնք սրբությամբ պահում էին հոր աշուղության տարիների հիշատակները՝ քյամանշան ու խաղերի դավթարը, հանգիստ նստեին իրենց տները և շհետաքրքրվեին նրա ձակատագրով, շորոնեին, շձգտեին պարզել վախճանի հանգամանքները, կամ եթե կենդանի էր դեռ, շփորձեին եապ հաստատել նրա հետ, շգնային, շգային: Եվ երբ Գ. Ախվերդյանը նրանց հետ գրուցելուց և հին Տիղիսի ողբերգությանն ականատես այլեայլ մարդկանց հարցուիորձ անելուց հետո դրում էր, որ Սայաթ-Նովան ողբերգական մահ է գտել 1795 թ., ապա արձանագրում էր բացարձակ ձշմարտություն:

Ախվերդյանի որածը, մեր համոզմամբ, վաղուց ձեռք է բերել անառարկեցիության իրավունք ու դրանով իսկ գերադասելի դարձել ամեն կարգի այլ աղբյուրների նկատմամբ, աղբյուրներ, որոնք երգչի բնական վախճանը դնում են 1801 թ. կամ այդ տարվա վերջերից հետո, և որոնց, ինչպես ասացինք, հավատում էր կ. Մելիքսեթ-Բեկը: Եվ ոչ միայն նա:

Մեզանում հաճախ ավելորդ վստահություն է ցուցաբերվում օտար, երբեմն միտումնավոր ու սխալաշատ աղբյուրների նկատմամբ և արհամարհանք՝ մեր մատենադիրների հանդեպ: Մարդիկ փոխանակ անձանձիր կերպով հայ տպագիր ու ձեռագիր հիշատակարաններից անհրաժեշտ ատաղձները հավաքելու, փոխանակ հայրենի գիշանները մանրաղնին հետախուզելու, գյուրախաբությամբ դուս են բաց անում օտար վարկածների առաջ և հալած յուգի աեղ ընդունում դրանք առանց լրջորեն ստուգելու, քննելու, բաղգատելու:

Մեզ համար ցավալի է. որ այդպիսի վարկածի հետ լրջորեն հաշվի է նըստել և երգչի վախճանի հարցը առկախ թողել Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծադրժության մի այնպիսի լուրջ հետազոտող, ինչպիսին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Հասրաթյանն է. և գրել, թե՝ «Վրացական արխիվներից Գ. Լեռնիձեն և պրոֆ. Մելիքսեթ-Բեկը հայտնաբերեցին վկայություններ, որ Սայաթ-Նովան մեռել է իր բնական մահով՝ 1801 թվականին», որ իբր մեղ ռայս ամենը իրավունք չի տալիս առ այսօր ժխտել, որ Սայաթ-Նովան չէր կարող իր բնական մահով, ավելի ուշ մեռած լինել»<sup>67</sup> և այլն:

<sup>66</sup> Գրականության և արվեստի թանգարան, Խ. Արովյանի արխիվ. № 166.

<sup>67</sup> Սայաթ-Նովա, Երևան, 1963, էջ ՀՀՀՎI—ՀՀՀՎIII.

Պրողություն է սակայն, որ «Վրացական աղբյուրներից հայտնաբերված վկայությունները» ո՛, թե երգչի կենդանության տարիներին կամ չէ վախճանի օրերին կազմված դիվանական վավերաթղթեր են, այլ ԽIX դ. 20—30-ական թթ., այսինքն՝ Ախմերովյանի աշխատությունից (1852) մեկ-երկու տասնամյակ միայն առաջ, և XIX դ. 60-ական թթ., այսինքն՝ Ախմերովյանի մահվանից շուրջ մի տասնամյակ հետո գրված գրքերի էջնը՝ Ռուսներ արքայազնի «Կալմասորա» և Պատոն իոսելիհանու «Գեորգի երրորդի կյանքը» աշխատությունների առանձին հայտարարություններ, որոնց հեղինակները Սայաթ-Նովայի ժառանգների համեմատությամբ կողմնակի անձնոր են սույլ:

Մինչդեռ Սայաթ-Նովան վրաց արքայադուների կյանքի ձանապարհին հանդիպած մի շնորհալի «գլեխո» էր սոսկ, ճորտ, որի պարտականությունն էր զվարացնել տերերին, անգամ ծալրածուի դեր կատարել, ու միայն այսքանը, ժառանգներն այլ էին, արլունակից ու հարազատ, պապի նման տառապած ու անաբբված: Պարու էլ, միթե, որ ձշմարտությունը վերջիններին ավելի սիտի հետաքրքրել, քան Պետերբուրգ հեռացված շահել արքայազուներին: Ժառանգները, կրկնում ենք, Սայաթ-Նովայի սպանության մասին հն վկայել, մեր հետախուզումներն էլ, ինչպես տեսանք, հանգեցրին դրան:

Անկախ այս բոլորից, մեր համոզմամբ, մտացածին է «Կալմասորայի» հիշված դրվագը, ըստ որի, որպես թի 1801 թ. (թե՝ այդ տարվա վերջերին) Սայաթ-Նովան՝ ո՛չ վաղուց արեղա գարձած, ալրում էր Հազբատում, հանդիպել է իոանե արքայազնի դասընկերոց և «երկվորյակի»՝ իոնա իելաշվիլու հետ, հյուրասիրել վերջինիս, իր վիճակից զանգատվել, երգել<sup>58</sup>:

Իոնա իելաշվիլու անունից արքայազնը այսպիս է պատմում. «Վարդապետը մատուցեց Ռուսային նախաճաշիկ. և սկսեցին ուտել, ե սրա հետ յավ գինի էլ մատուցեց Ռուսային և ինքն էլ յալ կոնծեց: Ակա վարդապետը վեր բերեց սաղը (չոնգուրը) և սկսեց նվազել, ապա սկսեց երգել՝ այսպես»:

Միջանկյալ նկատենք, որ Սայաթ-Նովան, իր իսկ վկայությամբ, սովորել ու նվազում էր՝ «քամանչեն», ու չոնգուրն, ու ամբուրեն»<sup>59</sup>, բայց ո՛չ սազ, և, բացի գրանից, սազի կամ չոնգուրի հայտնությունը հայոց վանքում խիստ կասեւածի է, բայց առաջ զնանք: Այնուհետև «Կալմասորայի» հեղինակը մեօ է բերում երգը՝ իբրև թե Սայաթ-Նովայի ասած, որն իրականում երկու հակասական տարբերակ ունի: Բայտ տկագեմիկոս Ա. Բարամիծեի իմրագրությամբ լույս տեսած վրացերեն վերջին հրատարակության, տարբերակներից մեկը չորս տուն է, իսկ մյուսը՝ հինգ տուն: Մելիքսեթ-Բեկը թարգմանել է չորս տնանոցը, այն էլ ագատ, իսկ Մ. Հասրաթյանը իրար է ձուկել երկու տարբերակը և ստացել վեց տուն, հիմնականում, իհարկե, հետեւ դուրս բնդարձակ տարբերակին: Տողերից մեկը վրացերենում հնչում է.

յնուու Յութեան, ծյռօծա հաօ մօնօմօծա...,

որ մի ժամանակ Մ. Հասրաթյանը թարգմանում էր՝

Յիս ազատ մարք՝ արելա դառնալն ինչիս էր...:

58 «Կալմասորայի» դրվագը թվագրվում է նույն ժամանակամիջոցում՝ ի. իելաշվիլու՝ մեածնե վրացախոս կաթողիկոսի հետ հանդիպած լինելու դիմուլածուի: Վրացախոս կաթողիկոսը գալիք է. էնագեթցի Դորգանյանն էր, որը զա՞ է բարձրացել 1801 թ. ապրիլի 28-ին: Ուրեմն՝ հանդիպումն նույն է դրանից հետո:

59 Գ. Ա. իւ վեր դ յան, լշ 108:

իսկ վերջին անգամ դարձրել է՝

Ասեմ, կըրունափոր դառնալն ինչիս էր...

որն ավելի ճիշտ է արտահայտում վրացերեն բնագրի բուն իմաստը։ Լ. Մեհմանակին էլ, վերաբերեալ էլ, փարելով կրծատ տարբերակին, փոխադրել է այսպես.

Աշխարհիկիս անրաբուժությունն ինչիս էր,  
ինձ վսրդապես ձեռնադրվելն ինչիս էր...

Երգի հայերեն թարգմանությունների մեջ կա մի տուն, որ Հասրաթյանը վերցրել է շորս տնանոց տարբերակից և նրա տողերից մեկը թարգմանել՝

Արփայիս սիվ քուրձը բաժին էլուլ...

այնինչ նույն տողը նրանից առաջ է. Մելիքսեթ-Բեկը փոխադրել էր՝

Այժմ տիա քուրձը հսրգին սետզած  
Այս վիճակն առաջնորդից ինձ եղավ..

Երգը և, հասկապես, մեջբերած տողերը գրդառում են իոնային։ Եվ նա զգաստության է կոչում Սայաթ-Նովային։ «Հայր, կուսակրոն (մոնոզոն) եք, դեսի ձախ շթեքվեք...»։ Ու փոքր անց կրկին խրատում. «Քանի որ աշխարհից հեռացաք, նվազելուց ու խաղերից ևս ձեռք պիտի վերցնեք...»։ Սաւաթ-Նովան դիմում է ինքնարգարացման. «Իմ առաջնորդն (փարգապետն) էր, որ հրամայեց, և ես այսպիսի պայման դրի, որ քանի այս սազը (չոնզուրը) այս լարերով է գարզարված և այն չի կտրվի, ձեռք չեմ վերցնի, այն պատճառով, որ երբ ինձ վարդապետ (վանական) ձեռնադրեցին, այս լարերը ծոցումս էին մնացել և սրանք իս ինձ հետ օծվեցին (օրհնվեցին), և ահա այս օծված (օրհնված) լարերով է, որ նվազում էմ սազով (չոնզուրով)»<sup>60</sup>:

Կրկին մի միջանկյալ դիտողություն. սազի կամ չոնզուրի լարը, ինչից էլ պատրաստմած լինի, երեսունհինգ տարի անխափան չի հնչի, եթե նրա վրա շարունակ նվազում են. Այդ լարը պիտի կտրվի, մինչև իսկ տարին մի քանի անդամ, Զարմանալի է, որ շուրջ 1765 թ. քահանա ձեռնադրված Սայաթ-Նովայի չոնզուրի լարերը անխափան հնչում էին 1801 թվականին անդամ...

Արդ, ինչպիս համատեղել «Կալմասոբայի» ողբերդական դրվագը իրականության հետո Վկայակոչված դրույցը, եթե բացարձակ շինծու չէ, ասկա, պիտի էարծել, արձագանք է վաղ շրջանի իրողության, տեղի ունեցած Կախոքարգանսարայում, Սայաթ-Նովայի քահանայության առաջին տարիներին, 1765—1766 թթ. միշտ, երբ աշխարհ չէին եկել ու հերաշվիլին և ու էլ արքայազնը. Աշխարհիկ վիճակի կորսոյան համար նման սուր կարող էր անել միայն բռնությամբ նոր ձեռնադրված մեկը, բայց ու երբեք ութսունն անցած մի վանական, այն էլ երեկով անծանոթ երեխայի մոտ։ Հայտնի է, որ «Կալմասոբան» խմբադրելիս (1813—1828 թթ. միջնական արքայազնն օգտագործել է ին գրուցներ և իրական ու երեակայական պատմություններ՝ լսած կամ բա-

<sup>60</sup> Լ. Ռ. Ելիքս եթե թթ. Բ. կ., գրառ աղբյուրները, Հատ. 9, էջ 147—148։ Բաղատության համար օգտվել ենք՝ Սայաթ-Նովայի, Երևան, 1959, և այս թթ. նույն աղբյուրները, Հայտնի է, որ «Կալմասոբան» խմբադրելիս (1813—1828 թթ. միջնական արքայազնն օգտագործել է ին գրուցներ և իրական ու երեակայական պատմություններ՝ լսած կամ բա-

բեկամների հաղորդած (նամակով կամ անձամբ)<sup>61</sup>, իշարկե, քմահանորեն փոխել գործող անձանց, տեղը, միջավայրը: Սրկար ժամանակ ապրելով Վրաստանից Հեռու, Պատերբուրգում նո չատ բան մոռացել էր կամ իրար խառնել, թեզետ հիմնական զորավիզը հիշողությունն էր: Բայց հայտնի է, որ հիշողությունը ճշմարտության պահպանման վստահելի անոթ չէ, շուտ է պղասորվում և ամեն ինչ տակնուվրա անում:

Զմոռանանք և մի ուրիշ հանդամանք: Արքայաղնը ծնվել էր 1772թ.<sup>62</sup>: Խելաշվիլին նրա դասընկերն ու հասակակիցն էր, 1801 թ. դեռ շատ երիտասարդ, նույն տարիքի կամ մեկ-երկու տարով փոքր:

Կարելի է անառակելիորեն հաստատված համարել, որ Սայաթ-Նովան Հաղբատի վանքում կրօնավորել կարող էր միայն 1778—1784 թթ. ժամանակամիջոցում: Եթե անդամ իոնա Խելաշվիլու հնարավոր այցելությունը Հաղբատ տեղի ունեցած լիներ վերջին տարում, աւա այդ ժամանակ, ամենաշատը, տասներեքամյա երեխա պիտի լիներ նա, տարիք, որ բոլորովին չի համապատասխանում Խելաշվիլուն վստահված պաշտոնին ու աստիճանին: Տասներեքամյա մի երեխայի հոգեոր ոշխանությունը չէր կարող հանձնարել վանական տուրքեր հավաքողի պատասխանատու պաշտոնը: Այդ տարիքի մի մանկան հետ վաթսունհինդամյա մի վարդապետ չէր կարող լուրջ հարցերի շուրջ զրուցել և, անգամ, նախատինքի արժանանալ՝ դավանաբանական խոտորումների համար:

Եթե մի պահ ընդունենք, որ Խելաշվիլին Սայաթ-Նովայի հետ հսկապես 1801 թվականին է հանդիպել, կամ էլ հավատանք անցյալ դարի վրաց պատմաբան Պլատոն Իոսելիիանու (ծն. 1809) «Գեորգի երրորդի կյանքը» աշխատության մեջ առկա տվյալին, ըստ որի Սայաթ-Նովան վախճանվել է 1801 թ.<sup>63</sup>, դարձյալ մեջտեղ են դալիս դորավոր հակաֆաստեր: Խաղաղ պայմաններում Հաղբատում վախճանված մի վանական, այն էլ վանքի լուսարարը, ինչպիսին Սայաթ-Նովան էր, պիտի ունենար շիրիմ ու տապանաքար, մանավանդ որ Հաղբատում անդամ ծերերի մահը հազվագետ երևույթ էր<sup>64</sup>: Բայց Հաղբատի բակում նման տապանաքար չի եղել ոչ առաջ և ոչ էլ այժմ: Եվ ո՞րտեղից լիներ, երբ հանձարեղ երդիչը դոհվել էր 1795 թ. սեպտեմբերի 11-ին, Տիխիսի ավերման ժամանակ:

<sup>61</sup> Պ. Մուրադյան, Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների, Երևան, 1963, էջ 90.

<sup>62</sup> Լ. Մելիքսեթ - Բեկ, Վրաց աղբյուրները, Հատ. 4, էջ 238—239 և 260:

<sup>63</sup> Համապատասխան մեջբերումը տես առ Սուրաղյանի նշված աշխատության մեջ, էջ 6:

<sup>64</sup> Մ. Թաղիաղյանցը վերհիշելով 1823 թ. առաջին ամիսներին Հաղբատում անցկացրած իր օրերը, ասում է. «Զայտու ժամանական մեռա մի ի մերոցն Մինաս վարդապետ Կարճիկ կոչեցեալ, և ի խնդիր լինել մեր դղագաղէ՝ թէ ի վանսն և թէ ի գեղջ որ պարունակեր տունս իբրև 150, ո՛չ զտաք: Եւ ի հարցանել մերում ցերեց տեղույն Ստեփանոս, թէ «ապա դիարդ թաղէր նա զմենեալս իր», պատասխանեաց. թէ՝ «Եհա քառասուն ամք են, զի քահանայեմ աստ, և ո՛չ զոք թաղեցի ի մեծամեծաց մինչեւ ի փոքրկունս» (Մ. Թաղիաղյանց, Ճանապարհորդութիւն ի Հայո, Հատ. I, Կալկաթա, 1847, էջ 334—335): Այլ վերապատում՝ նույն տեղում, էջ 88): Ուրեմն, Հաղբատում մեռեն անգամ անսովոր բան էր, որ շէր կարող լիշվել:

## К ВОПРОСУ О ПРЕБЫВАНИИ САЯТ-НОВЫ В АХПАТСКОМ МОНАСТЫРЕ

Доктор филол. наук П. О. АКОПЯН

(Резюме)

В среде исследователей жизни и творчества выдающегося армянского поэта XVIII в. Саят-Новы укоренилось мнение о том, будто последние 25 лет своей жизни (1770—1795) он провел в Ахпатском монастыре. На основании достоверных источников автор воссоздает действительную картину Ахпатского монастыря и одновременного села в XVIII в., показывает, что монастырь с 1749 по 1799 г., за исключением короткого времени (1778—1784), не функционировал из-за непрекращающихся набегов горцев, а жители деревни и члены духовной братии были вынуждены покинуть насиженные места. Следовательно, если даже Саят-Нова и был членом указанной братии, то это могло быть только лишь в период 1778—1784 гг.

Выясняется, что Саят-Нова после смерти своей жены (1768) из местечка Ках (около совр. Закаталы), где он был священником под именем Тер-Степанос, возвращается в Тифлис и, согласно правилам армянской церкви, становится монахом в Кафедральном соборе, находящемся внутри Тифлисской крепости. Он служил там до 1778 г., возможно и после указанной даты. После того как (начиная с 1778 г.) братия возвращается в Ахпат и монастырь восстанавливается, весьма возможно, что в числе других из Тифлиса в Ахпат переезжает и Саят-Нова — Тер-Степанос. Он там оставался до 1784 г., после чего вернулся в Тифлис, где жил до своей трагической гибели (11 сентября 1795 г.), подробности которой восстанавливаются по данным воспоминаний современников поэта.

В статье анализируется также эпизод из книги «Калмасоба» грузинского царевича Иоанна (1772—1839), отмечаются содержащиеся в ней явные анахронизмы. Утверждение автора указанной книги о том, что Саят-Нова в Ахпатском монастыре якобы встретился с грузинским иноком Хелашвили беспочвенно, так как во время пребывания Саят-Новы в Ахпатском монастыре Хелашвили был мальчиком 10—12 лет.

Вывод некоторых исследователей будто Саят-Нова умер своей смертью в 1801 г. или позже лишен оснований.